ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-20-19/1-1

ք. Երևան 27.10.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և "Կոմպյուտեր Սերվիս" ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ի. Անդրեասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ծառայությունների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 9000000 (ինն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից առավելագույնը 6000000 ՀՀ դրամը 1-ին չափաբաժնի համար, 3000000 ՀՀ դրամը՝ 2-րդ չափաբաժնի համար:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2020թ դեկտեմբերի 20-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ**, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն – 1-ին չափաբաժնի մասով կազմում է 6797124 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի մասով՝ 4434660 ՀՀ դրամ.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության կամ ապրանքների մատակարարման առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության կամ ապրանքների մատակարարման քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում,

Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական ծառայությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց 18/2
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2050022151631001
ՀՎՀՀ 02508699
տնօրեն

Ի. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-19/1-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջանցիկ CPV կոդը	Անվանումը	Չ/մ	Քանակը	Ծառայության մատուցումը 2020-ի 4-րդ եռամսյակի ընթացքում՝ ըստ ԳՇ ռազմատեղագրական ծառայության հայտերի, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ. Առավելագույն գումարը, ՀՀ դրամ
1	50611100/3	Ռոզմական հատուկ մասնագիտական տեխնիկայի սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայություններ / Շարժական համալիրների սպասարկման և վերանորոգման ծառայություններ	դրամ	1	6,000,000

Այդ թվում՝

Հ/Հ	Վերանորոգման ծառայությունների համար անհրաժեշտ ծառայությունների անվանումը	Չ/մ	Միավորի գինը, ՀՀ դրամ
1	Գիրոսկոպիկ սարքի ստուգում /ՇԼՏԳՍ համալիրի/	հատ	100,000
2	Ջրամատակարարման համակարգի ստուգում		
	ՇԼՏ համալիրի	հատ	40,000
	ՇԼՏԳՍ համալիրի	հատ	30,000
3	Հովացման համակարգի ստուգում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	20,000
4	Տաքացման համակարգի ստուգում		
	ՇԼՏ համալիրի	հատ	40,000
	ՇԼՏԳՍ համալիրի	հատ	30,000
5	Սանիտարական համակարգի ստուգում /ՇԼՏ համալիրի/	հատ	25,000
6	Վառելիքի մատակարարման համակարգի ստուգում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	30,000
7	Էլեկտրական համակարգի ստուգում		
	ՇԼՏ համալիրի	հատ	80,000
	ՇԼՏԳՍ համալիրի	հատ	60,000
8	Գիրոսկոպիկ թելի փոխարինում /ՇԼՏԳՍ համալիրի/	հատ	500,000
9	Գիրոսկոպիկ սարքի մարտկոցի փոխարինում /ՇԼՏԳՍ համալիրի/	հատ	70,000
10	Ղեկավարման վահանակի փոխարինում /ՇԼՏԳՍ համալիրի/	հատ	120,000
11	Ղեկավարման պլանշետի մարտկոցի փոխարինում /ՇԼՏԳՍ համալիրի/	հատ	30,000
12	Տախեոմետրի համակցման մասի փոխարինում /ՇԼՏԳՍ համալիրի/	հատ	30,000
13	Գիրոսկոպիկ սարքի ճշգրտում /ՇԼՏԳՍ համալիրի/	հատ	200,000
14	Ջրի պոմպերի /12Վ/ փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	20,000
15	Ջրամատակարարման համակարգի խողովակների փոխարինում		
	ՇԼՏ համալիրի	հատ	60,000

	ՇԼՏԳՍ համալիրի	հատ	30,000
16	Ջրամատակարարման համակարգի խողովակների կցորդների փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	20,000
17	Ջրամատակարարման համակարգի փականների փոխարինում		
	ՇԼՏ համալիրի	հատ	10,000
	ՇԼՏԳՍ համալիրի	հատ	5,000
18	Ջրի տարաների ջերմամեկուսացման փոխարինում		
	ՇԼՏ համալիրի	հատ	120,000
	ՇԼՏԳՍ համալիրի	հատ	40,000
19	Ջրատաքացման համակարգի փոխարինում /ՇԼՏ համալիրի/	հատ	20,000
20	Ջրի ծորակների փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	20,000
21	Կոնդիցիոներների ֆիլտրերի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	10,000
22	Webasto համակարգի հովացման խողովակների փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	30,000
23	Պատուհանների ցանցերի և ծածկերի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	15,000
24	Գեներատորի հովացման դրնակի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	20,000
25	Webasto շարժիչի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	50,000
26	Webasto համակարգի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	150,000
27	Ծխի ելքի խողովակների փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	40,000
28	Լոգարանի փոխարինում /ՇԼՏ համալիրի/	հատ	40000
29	Լոգարանի ներկում /ՇԼՏ համալիրի/	հատ	30,000
30	Ցնցուղի փոխարինում /ՇԼՏ համալիրի/	հատ	15,000
31	Բիո զուգարանի փոխարինում /ՇԼՏ համալիրի/	հատ	20,000
32	Գեներատորի վառելիքի մատակարարման համակարգի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	20,000
33	Webasto համակարգի վառելիքի մատակարարման փոխարինում		
	ՇԼՏ համալիրի	հատ	50,000
	ՇԼՏԳՍ համալիրի	հատ	40,000
34	Webasto համակարգի վառելիքի բակի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	20,000
35	Գեներատորի բակի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	30,000
36	Էլեկտրական վարդակների (անջատիչների) փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	3,000
37	Էլեկտրական դեկավարման համակարգի փոխարինում		
	ՇԼՏ համալիրի	հատ	300,000
	ՇԼՏԳՍ համալիրի	հատ	250,000
38	12-220Վ համակարգի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	40,000
39	Մարտկոցների վերալիցքավորման համակարգի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	30,000
40	Լեդ լույսերի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	7,000
41	Հողանցման համակարգի փոխարինում /ՇԼՏԳՍ և ՇԼՏ համալիրների/	հատ	30,000

Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, նյութերի և այլ օժանդակ նյութերի՝			Չ/մ	Միավորի գինը, ՀՀ դրամ
	անվանումը	տեխնիկական բնութագիրը		
1	Գիրոսկոպիկ թել	ՇԼՏԳՍ համալիրի համար գիրոսկոպիկ թել՝ 200մմ երկարությամբ հատուկ պատրաստված համաձուլվածքից ժապավեն՝ հաստությունը 0,027մմ, խզման ճիգը մինչև 3 կգ	հատ	1,000,000
2	Գիրոսկոպիկ սարքի մարտկոց	ՇԼՏԳՍ համալիրի համար՝ GYROMAX AK-2M սարքի մարտկոց, լարում 24Վ, թողունակություն 6,5 Ա	հատ	600,000
3	Ղեկավարման վահանակ	ՇԼՏԳՍ համալիրի համար՝ GYROMAX AK-2M սարքի ղեկավարման վահանակ, մուտքային լարումը 27 ± 2,7 Վ հաստատուն, ելքային լարումը 36 Վ, եռաֆազ, 400Հց	հատ	250,000
4	Ղեկավարման պլանշետի մարտկոց	ՇԼՏԳՍ համալիրի համար՝ GYROMAX AK-2M սարքի ղեկավարման պլանշետի մարտկոց, Li-ion Pocket L00X 700 տիպի կամ համարժեք, կոդը՝ 03101214	հատ	30,000
5	Տախեոմետրի համակցման սարք	ՇԼՏԳՍ համալիրի համար՝ GYROMAX AK-2M սարքի և էլեկտրոնային տախեոմետրի հուսալի ամրակցման սարք՝ 162մմ x 73մմx40մմ չափսի, ոչ մագնիսացող մետաղից, ամրակցումը կատարվում է ոչ մետաղական 22,5մմ երկարությամբ պտուտակներով	հատ	450,000
6	12Վ ջրի պոմպ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ 12 Վ, ջրի պոմպ, առնվազն՝ բոպեում 32 լիտր թողունակությամբ	հատ	45,000
7	Խողովակների կոմպլեկտ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ մետաղապլաստե խողովակ՝ 0,5 դյույմ հաստությամբ, նախատեսված տաք և սառը ջրի համար	հատ	10,000
8	Խողովակների կցորդների կոմպլեկտ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ պլաստմասե և երկաթե անկյունակներ՝ 1/2 դյույմ հաստությամբ, նախատեսված տաք և սառը ջրի համար	հատ	5,000
9	Փականներ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ 1/2 դյույմ լատունե փական, նախատեսված տաք և սառը ջրի համար	հատ	4,000
10	Ջրի տարաների տերմոպլաստի կոմպլեկտ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ ջրի տարաների միասնական լրակազմ. 300 լ մետաղյա չժանգոտվող տարա-1 հատ, 100 լ պլաստմասե սենդային տարա -2 հատ	հատ	20,000
11	Ջրատաքացման համակարգ	ՇԼՏ համալիրի համար՝ 220Վ սնուցվող տեն, նախատեսված 300լ ջուր տաքացնելու համար	հատ	70,000
12	Ծորակներ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ մեկ փականով ջրի ծորակ՝ 1/2 դյույմ հաստությամբ, նախատեսված սառը ջրի համար	հատ	15,000
13	Ֆիլտրեր	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ Webasto AT2000STC-ի վառելիքի ֆիլտր, օդի ֆիլտր	հատ	10,000
14	Webasto համակարգի հովացման բլոկ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ հովացման բլոկ՝ Webasto AT2000STC Thermo Top Z, 12 V TTZ	հատ	20,000

15	Պատուհանի ցանցեր, ծածկեր	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ պատուհանի ցանց՝ եվրո ցանց, 50× 70 սմ, ծածկ՝ բռեզենտե կտոր	հատ	12,000
16	Գեներատորի դուռ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ մետաղյա դուռ՝ 73×73սմ, 0,3մմ հաստության, շրջանակը՝ 3×3սմ անկյունակով	հատ	30,000
17	Webasto-ի շարժիչ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ 12V -ով բռնկվող Webasto AT2000STC-ի շարժիչ	հատ	100,000
18	Webasto համակարգ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ Webasto AT2000STC-ի օդատաքացուցիչ՝ բենզինե շարժիչով և 12V բռնկման համակարգով	հատ	450,000
19	Ծխատար խողովակներ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ Webasto AT2000STC-ի մետաղե խողովակ՝ 100 մմ երկարության	հատ	40,000
20	Լոգարանի տակդիր	ՇԼՏ համալիրի համար՝ լոգարանի տակդիր՝ 80 × 80 սմ չափսի, պատրաստված մետաղալլաստից	հատ	120,000
21	Ցնցուղ	ՇԼՏ համալիրի համար՝ ցնցուղ՝ ծորակին միացնելու հնարավորությամբ, նախատեսված տաք և սառը ջրի համար	հատ	25,000
22	Բիո զուգարան	ՇԼՏ համալիրի համար՝ բիոզուգարան՝ նախատեսված 1000 անգամ օգտագործման համար, ինքնամաքրման համակարգով	հատ	200,000
23	Գեներատորի վառելիքի մատակարարման համակարգ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ 4KW գեներատորի համար կաբյուրատոր՝ VM, ծավալը 110 սմ³	հատ	40,000
24	Webasto համակարգի վառելիքի մատակարարման խողովակներ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ Webasto AT2000STC-ի ռետինե կոշտ 4մմ-նոց խողովակ	հատ	60,000
25	Webasto համակարգի վառելիքի բակ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ Webasto AT2000STC-ի մետաղե բաք՝ 20 լ տարողության	հատ	20,000
26	Գեներատորի վառելիքի բակ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ 20լ տարողության մետաղե բաք, նախատեսված 4KW գեներատորի համար	հատ	30,000
27	Գեներատորի այրման մումիկ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ գեներատորի այրման մումիկ՝ 1-բեղիկանի	հատ	3,000
28	Վարդակներ, անջատիչներ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ 220V վարդակ պաշտպանիչ կափարիչով, ջրակայուն, անջատիչ՝ 2 սեղմակով	հատ	1,500
29	Ղեկավարման բլոկ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ մետաղական արկղ՝ 25×35×20սմ չափսերի, բացվող դռնակով, կողպեկով, առնվազն 12 անջատիչներ տեղադրելու հնարավորությամբ	հատ	25,000

30	12-220Վ ինվերտոր /փոխակերպիչ/	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ հոսանքի փոխարկիչ (ինվերտոր) նախատեսված առնվազն 75Ա մարտկոցի համար, 12Վ-ը 220Վ-ի փոխարինող, հզորությունը՝ ոչ պակաս 3000Վտ	հատ	70,000
31	Մարտկոցի վերալիցքավորիչ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ "Վիմպել-57" կամ համարժեք, նախատեսված առնվազն 75Ա մարտկոցի վերալիցքավորման համար	հատ	42,000
32	Մարտկոց 75Ա	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ կապարաթթվային մարտկոց, առնվազն 75Ա հզորությամբ	հատ	49,000
33	Հողանցման լարեր և շտիր կոմպլեկտ	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ բազմաթելային պղնձե լար՝ 3×6մմ, երկարությունը՝ առնվազը 20մ, ռետինե մեկուսիչ՝ 12մմ հաստությամբ, երկաթե ձող՝ 45սմ երկարությամբ	հատ	25,000
34	Լեդ լույսեր	ՇԼՏ և ՇԼՏԳՍ համալիրների համար՝ կլոր կամ քառակուսի լեդ լույսեր՝ 3W հզորությամբ, 220V հոսանքով աշխատելու համար	հատ	2,500
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ հանրագումար			**6864000**

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.

Հապավումները կայդալ.

ՇԼՏ համալիր՝ «Շարժական նավարկային տեղագրական համալիր»,

ՇԼՏԳՍ համալիր՝ «Շարժական նավարկային տեղագրակոպակցիչ՝ գիրոսկոպիկ սարքով» համալիր:

Իրականացվում է ՀՀ զինված ուժերում առկա երկու տեսակի շարժական համալիրների մասնագիտորեն կահավորված կունգի բաղադրիչների վերանորոգում: Անսարքության դեպքում իրականացվում է համակարգերի, սարքերի բաղադրիչ մասերի աշխատանքի ստուգում, անհրաժեշտության դեպքում՝ մասի փոխարինում:

Իրականացված ծառայությունների համար պետք է տրվի երաշխիք՝ հանձման-ընդունման օրվանից 12 ամիս ժամկետով:

Տեխնիկայի տեղափոխումը նորոգման (անհրաժեշտության դեպքում) և նորոգումից հետո ետ վերադարձը պետք է կազմակերպվի նորոգող կազմակերպության կողմից և միջոցներով՝ Երևան, Բագրևանդ-5 հասցեից:

Նորոգման ընթացքում փոխարինվող շինանյութերը, սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից:

Նորոգումն իրականացվում է ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական ծառայության հայտերի և փաստացի պահանջարկի համաձայն:

Ծառայությունը համարվում է ընդունված (հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է) փորձարկումից և շահագործողի կողմից ընդունելուց հետո:

Հ/Հ	Միջտեցիկ CPV կոդը	Անվանումը	Չ/մ	Քա-նակը	Ծառայության մատուցումը 2020-ի 4-րդ եռամսյակի ընթացքում՝ ըստ ԳՇ ռազմատեղագրական ծառայության հայտերի, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ. Առավելագույն գումարը, ՀՀ դրամ
2	50311120/1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	դրամ	1	3,000,000
Այդ թվում՝					
Հ/Հ	Վերանորոգման ծառայությունների համար անհրաժեշտ ծառայությունների անվանումը			Չ/մ	Միավորի գինը, ՀՀ դրամ
1	Լազերային համակարգի ստուգում				

	Xerox WC 7425,7525,7830 սարքերի	հատ	9000
	Xerox 7740 WF սկաների	հատ	20000
2	Թանաքային համակարգի ստուգում		
	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի	հատ	9000
	XEROX WF 7142 սարքի	հատ	12000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	30000
3	Թղթուղու համակարգի ստուգում		
	Xerox WC 7425,7525,7830, HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի	հատ	8000
	XEROX WF 7142 սարքի	հատ	10000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	20000
	Xerox 7740 WF սկաների	հատ	7000
4	Տպագրական համակարգի ստուգում		
	Xerox WC 7425,7525,7830, HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի	հատ	8000
	XEROX WF 7142 սարքի	հատ	12000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	20000
5	Տրամգրային ապահովման ստուգում		
	Xerox WC 7425,7525,7830, XEROX WF 7142 սարքերի	հատ	8000
	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի	հատ	5000
	HP DesignJet Z6600 սարքի, Xerox 7740 WF սկաների	հատ	15000
6	Երնակման մասի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	30000
7	Ժապավենի միջանկյալ տեղաշարժի համակարգի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	60000
8	Ժապավենի մաքրման հանգույցի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	25000
9	Անալոգային-թվային սենսորի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	20000
10	Դիոդային քանոնի փոխարինում		
	Xerox WC 7425,7525,7830 սարքերի	հատ	30000
	Xerox 7740 WF սկաների	հատ	60000
11	Լազերային սենսորի մաքրում		
	Xerox WC 7425,7525,7830, HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի	հատ	10000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	30000
	Xerox 7740 WF սկաների	հատ	20000
12	Թանաքային համակարգի մաքրում		
	HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի	հատ	20000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	40000
13	Թանաքային գլխիկների փոխարինում		

	HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի	հատ	5000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	20000
14	Թղթի տրման անիվիկների (ռոլիկների) փոխարինում		
	Xerox WC 7425,7525,7830 սարքերի	հատ	20000
	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի	հատ	8000
	XEROX WF 7142 սարքի, Xerox 7740 WF սկաների	հատ	10000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	30000
15	Թղթի մատակարարման սենսորի փոխարինում		
	Xerox WC 7425,7525,7830 սարքերի	հատ	15000
	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի	հատ	8000
	XEROX WF 7142 սարքի, Xerox 7740 WF սկաների	հատ	10000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	40000
16	ADF-ի (ինքնամատակա-բարման համակարգի) փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	15000
17	ADF-ի անիվիկների (ռոլիկների) փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	8000
18	Թղթի փաթաթման վալերի փոխարինում /HP DesignJet Z6600 սարքի/	հատ	20000
19	Թղթի ելքի շարժիչի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	15000
20	Առաջին շարժի վալի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	15000
21	Հետադարձ վալի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	20000
22	Տպագրական սալիկի (պլատայի) փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	35000
23	Տպագրական թմբուկների փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	5000
24	Թանաքի շարժի ռետինե ժապավենի փոխարինում		
	HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի	հատ	10000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	30000
25	Թանաքի շարժի տարայի փոխարինում		
	HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի	հատ	10000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	30000
26	Հիշողության կոշտ սկավառակի փոխարինում		
	Xerox WC 7425,7525,7830 սարքերի	հատ	20000
	HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի	հատ	25000
	HP DesignJet Z6600 սարքի	հատ	60000
27	Ժամային-քանակական էլեմենտի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ	8000
28	Օրագրերի թարմացում		

	Xerox WC 7425,7525,7830, HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի		հատ	8000
	XEROX WF 7142 սարքի, Xerox 7740 WF սկաների		հատ	10000
	HP DesignJet Z6600 սարքի		հատ	20000
Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, նյութերի և այլ օժանդակ նյութերի՝			**Չ/մ**	**Միավորի գինը, ՀՀ դրամ**
	անվանումը	**տեխնիկական բնութագիրը**		
1	Երևակման թաղանթ	Xerox WC 7425,7525,7830 սարքերի համար՝ երևակման թաղանթի հանգույց՝ կոդեր 848K08841, 848K08843, 848K08845 կամ 848K08846	հատ	180000
2	Ժապավենի միջանկյալ տեղաշարժի համակարգ	Xerox WC 7425,7525,7830 սարքերի համար՝ ժապավենի տեղաշարժի հանգույց՝ կոդեր 604K68530, 604K68531, 604K68532, 604K68533, 604K68534, 604K68535 կամ 604K68536		
		Xerox WC 7425,7525 սարքերի համար	հատ	500000
		Xerox WC 7830 սարքի համար	հատ	300000
3	Ժապավենի մաքրման հանգույց	Xerox WC 7425 սարքի համար՝ կոդ 001R00600, Xerox WC 7525,7830 սարքերի համար՝ կոդ 001R00613	հատ	60000
4	Դիոդային քանոն	Լուսադիոդային քանոն, Xerox WC 7425 սարքի համար՝ կոդ 130K72654, Xerox WC 7525, 7830 սարքերի համար՝ կոդեր 130K78680, 130K78681, 130K78690 կամ 130K78591	հատ	300000
5	Անալոգային-թվային սենսոր	Xerox WC 7425,7525,7830 սարքերի մաս՝ թղթի որոշման սենսոր, կոդ՝ 130K64150	հատ	120000
6	Թանաքային գլխիկներ	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի համար՝ կոդեր C4810A, C4811A, C4812A կամ C4813A (ըստ թանաքի գույնի)	հատ	40000
		HP DesignJet Z6600 սարքի համար՝ կոդեր CE018A, C1Q20A կամ CE020A (ըստ թանաքի գույնի)	հատ	100000
7	Թանաքի մատակարարման խողովակներ	Թանաքի մատակարարման խողովակներ, կոդեր՝ C7770-60251, C7770-60286 կամ համարժեք՝ համապատասխանող ըստ սարքի մակնիշի		
		HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի համար	հատ	10000
		XEROX WF 7142 սարքի համար	հատ	15000
		HP DesignJet Z6600 սարքի համար	հատ	20000
8	Թղթի տրման անիվիկներ (ռոլիկներ)	Թղթի տրման անիվիկների (ռոլիկների) բլոկ (լրակազմ), կոդեր՝ 675K82242, 022K74870, 604K56080, 113R00718 կամ համարժեք՝ համապատասխանող ըստ սարքի մակնիշի		
		Xerox WC 7425,7525,7830, HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի համար	հատ	45000
		XEROX WF 7142 սարքի համար	հատ	60000

		HP DesignJet Z6600 սարքի համար	հատ	120000
		Xerox 7740 WF սկաների համար	հատ	50000
9	Թղթի մատակարարման սենսոր	Թղթի մատակարարման սենսորներ, կոդեր՝ 130K72090, 110K10651, C7769-60379, CN538-67033, CQ890-67001, 130N01574 կամ 120E35552 (համապատասխանող ըստ սարքի մակնիշի)		
		Xerox WC 7425,7525,7830 սարքերի համար	հատ	60000
		HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի համար	հատ	30000
		XEROX WF 7142 սարքի համար	հատ	50000
		HP DesignJet Z6600 սարքի համար	հատ	90000
		Xerox 7740 WF սկաների համար	հատ	40000
10	ADF համակարգ (ինքնամատակարարման համակարգ)	Xerox WC 7425 սարքի համար՝ կոդ CET7917, Xerox WC 7525, 7830 սարքերի համար՝ կոդ 130K70160	հատ	300000
11	ADF համակարգի անիվիկներ (ռոլիկներ)	Xerox WC 7425,7525,7830 սարքերի համար՝ ADF համակարգի անիվիկներ (ռոլիկներ), կոդեր՝ 604K58410, 604K77810 կամ 059K61280	հատ	25000
12	Թղթի փաթաթման վալեր	HP DesignJet Z6600 սարքի թղթի փաթաթման վալ, կոդ՝ CQ109-67009	հատ	80000
13	Թղթի ելքի շարժիչ	Xerox WC 7425,7525,7830 սարքերի համար՝ թղթի ելքի շարժիչ, կոդ՝ 007K98080	հատ	30000
14	Առաջին շարժի վալիկ	Xerox WC 7425,7525,7830 սարքերի համար՝ առաջին շարժի վալիկ, կոդ՝ CET251018	հատ	15000
15	Հետադարձի վալիկ	Xerox WC 7425,7525,7830 սարքերի համար՝ հետադարձի վալիկ, կոդ՝ 604K66430	հատ	45000
16	Տպագրական սալիկ (պլատա)	Xerox WC 7425 սարքի համար՝ կոդ 160K99202, Xerox WC 7525, 7830 սարքերի համար՝ կոդեր 641S00808, 640S01360	հատ	110000
17	Տպագրական թմբուկ	Բազմաֆունկցիոնալ սարքի թմբուկ. Xerox WC 7425 սարքի համար՝ կոդեր 013R00647 R1,R2,R3,R4, Xerox WC 7525, 7830 սարքերի համար՝ կոդեր 013R00662 R1,R2,R3,R4	հատ	95000
18	Թանաքի շարժի ռեռիկե ժապավեն	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի համար՝ կոդ C7770-60014, XEROX WF 7142 սարքի համար՝ կոդ 023N01172	հատ	20000
		HP DesignJet Z6600 սարքի համար՝ կոդ CQ869-67072		60000
19	Թանաքի շարժի տարա	Ըստ սարքերի մակնիշների՝ համապատասխան չափսերի պլաստմասե փոխարինվող տարաներ, որոնց մեջ տեղադրվում են սարքերի տպիչ գլխիկները		
		HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի համար	հատ	30000
		HP DesignJet Z6600 սարքի համար	հատ	80000

20	Հիշողության սարք	Հիշողության մոդուլներ, կոդեր՝ 133K25535, 833W39040, 833W39041, CH654A, CH337A, CQ745A կամ համարժեք՝ համապատասխանող ըստ սարքի մակնիշի		
		Xerox WC 7425,7525,7830 սարքերի համար	հատ	60000
		HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի համար	հատ	70000
		XEROX WF 7142 սարքի համար	հատ	90000
		HP DesignJet Z6600 սարքի համար	հատ	100000
21	Ժամային-քանակական էլեմենտ	Xerox WC 7425,7525,7830 սարքերի համար՝ ժամային-քանակական էլեմենտ, պարամետրերը՝ 3,2V 48mA, կոդերը՝ M4T28-BR12SH1 կամ 207E22290 (համապատասխանող ըստ սարքի մակնիշի)	հատ	10000
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ հանրագումար			**4478000**

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ.

Իրականացվում է ՀՀ ԶՈՒ տեղագրական ծառայություններում առկա համակարգչային տեխնիկայի՝ բազմաֆունկցիոնալ սարքերի, լայնաֆորմատ տպիչների, սկաներների վերանորոգում: Անսարքության դեպքում իրականացվում է սարքերի աշխատանքի ստուգում, անհրաժեշտության դեպքում՝ մասի փոխարինում, մաքրում կամ երաշխիքային կարգավորումներ:

Իրականացված ծառայությունների համար պետք է տրվի երաշխիք՝ հանձման-ընդունման օրվանից 12 ամիս ժամկետով:

Տեխնիկայի տեղափոխումը (անհրաժեշտության դեպքում) նորոգման և նորոգումից հետո ետ վերադարձը պետք է կազմակերպվի նորոգող կազմակերպության կողմից և միջոցներով՝ Երևան, Բագրևանդ-5 հասցեից:

Նորոգման ընթացքում փոխարինվող շինանյութերը, սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից:

Նորոգումն իրականացվում է ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական ծառայության հայտերի և փաստացի պահանջարկի համաձայն:

Ծառայությունը համարվում է ընդունված (հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է) փորձարկումից և շահագործողի կողմից ընդունելուց հետո:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ
տնօրեն

Ի.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-19/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ եռամսյակների., ընդ որում՝բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.
չ/հ	անվանումը	CPV կոդը	4-րդ եռամսյակ
1	Շարժական համալիրների սպասարկման և վերանորոգման ծառայություններ	50611100/3	6000000
2	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	50311120/1	3000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ
տնօրեն

Ի.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-20-19/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-20-19/1-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն